Ս.ՇՏԻԿՅԱՆ

ԱՐԿԱԾԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆ ԱՌԱՆՑ ԱՐԿԱԾՆԵՐԻ

Խոսքը գերազանցապես վերաբերում է Հայպետհրատի հրատարակությամբ լույս տեսնող «Արկածային գրադարան» մատենաշարին, որը մեծ մասամբ բաղկացած է թարգմանական գրականությունից։ Հանրահայտ ճշմարտություն է, որ գեղարվեստական ստեղծագործությունների թարգմանությունը, որով զբաղվել են աշխարհի բոլոր ժողովուրդները՝ հնից առ այսօր, հանդիսանում է ամենաբարդ արվեստներից մեկը։

Այս խոշոր և, որոշ իմաստով, անփոխարինելի դերը, որ կատարել և շարունակում է կատարել «Արկածային գրադարանը», գրեթե դժվար է գերագնահատել։ Դրա մասին է վկայում, թեկուզ, այն հանգամանքը, որ հիշյալ խորագրի ներքո հրատարակվող ամեն մի հատորը ջերմությամբ է ընդունվում պատանեկան հասակի ընթերցողների կողմից, որոնց էլ, ի դեպ, գերազանցապես հասցեագրված է նա, և դառնում է նրանց սեղանի գիրքը։ Դրան մեծապես նպաստում է «Արկածային գրադարանի» համար նախընտրվող գործերի խելամիտ և ճաշակավոր ընտրությունը, ստեղծագործություններ, որոնցից շատերն արդեն համաշխարհային անուն ու հռչակ ունեն («Գուլիվերի ճանապարհորդությունը», «Անգլուխ ձիավորը», «Պրոֆեսոր Դոուելի գլուխը» և այլն), որոնց հրատարակումն ու վերահրատարակումը կարող է միայն պատիվ բերել մեզ և մեր թարգմանական գրականությանը։

Նշված անառարկելի հաջողությունների կողքին, սակայն, «Արկածային գրադարանում» հատկապես, և մեր թարգմանական գրականության մեջ ընդհանուր առմամբ, ավելի ու ավելի հիմնավորապես են տեղ գտնում լեզվա-ոճական բնույթի մի քանի վրիպումներ, որոնց վրա կկամենայինք ուշադրություն հրավիրել։

Թերևս կարիք չկա հիշեցնել այն հանրահայտ ճշմարտությունը, որ եթե հայոց լեզուն ունի, ենթադրենք, ռուսերեն տվյալ բառին համապատասխանող հոմանիշը, որը կիրառվում է, և այդպիսով արդարացնում իր գոյությունը, ապա նորը փոխառնելու կարիք չկա։ Սակայն մեր թարգմանիչները, մոռանալով կամ պարզապես անտեսելով այս հանգամանքը, որևէ գործ թարգմանելիս հաճախ գործածում են ռուսերեն կամ օտարազգի բառեր, որոնց համազորն ունի հայոց լեզուն։ Թարգմանությունների մեջ այսպիսի անհարկի փոխառությունների առանձնապես սիրահար է Մկրտիչ Արմենը։ Նրա մի քանի թարգմանություններում ընդհանրապես, «Արկածային գրադարանի» մյուս թարգմանիչների մոտ հատկապես, ինչքան կուզեք կարելի է

հանդիպել «դելեգատ, դեպուտատ, ադմիրալ, նակազ, ռակետ, էտիկետկա, բրոշյուր, կոնտրիբուցիա, կրիզիս, իդեոլոգիա, ստրուկտուրա, մոնոպոլիա, անալոգիա, ինդեքս, ստաբիլիզացիա, լոգիկա» և նման բազմաթիվ բառեր այն դեպքում, երբ մեր լեզուն ունի դրանց լիակատար համազորը հանդիսացող պատվիրակ, պատգամավոր, ծովակալ, պատգամ, հրթիռ, պիտակ, գրքույկ, ռազմատուգանք, ճգնաժամ, գաղափարախոսություն, կառուցվածք, մենաշնորհ, նմանություն, գործակից, կայունացում և այլ ձևերը: Նման ոչնչով չարդարացվող փոխառությունները, ցավոք, արդեն նկատելի որակ են կազմում մեր թարգմանիչների աշխատանքային գործունեության մեջ, որն, իհարկե, բնավ էլ խրախուսել չի կարելի:

Հայտնի է, որ յուրաքանչյուր լեզու, լինելով տվյալ ժողովրդի մտածողության դրսևորման միջոցը, ունի միայն իրեն հատուկ ոճերն ու դարձվածքները, որոնք անհասկանալի ու անըմբռնելի են այլ ժողովուրդների համար: Ժամանակակից լեզուներից յուրաքանչյուրի մեջ, ըստ պրոֆ. Գուրգեն Սևակի տվյալների, դրանք կազմում են բավականին պատկառելի մեծություն՝ 20-25 տոկոս: Թարգմանել դրանք՝անպայմանորեն մեծ սխալ կլիներ, և մեր թարգմանիչները պետք է ձգտեն հասնել նրան, որ կարողանան ճշտորեն գտնել համանման իմաստի արտահայտությունը հանդիսացող դարձվածքը մյուս լեզվում, մի աշխատանք, որն ամենևին էլ հեշտերից չէ:

Ցավոք մեր թարգմանիչների գերակշիռ մասը գերադասում է հայերեն թարգմանել այդ յուրահատուկ դարձվածքները, որոնք թե տգեղ են, և թե անհասկանալի ընթերցող լայն զանգվածների համար: Չնայած դրանք գրված են հայերեն տառերով, բայց մի՞թե հայերեն են, օրինակ՝ «Իսկ դու, Միշկա, լռիր», «Է, ուրեմն և գնա, աստված քեզ հետ», «Դե և ինչ», «Այդ ես», «Ահա այդ՝ գալիս է», «Դու ահա թե ինչ, Օստրովնով», «Նշանակում է, ես պիտի գնամ» և մի շարք համանման արտահայտություններ: Հայերեն չեն այս և նման արտահայտությունները, որովհետև նրանք բառացի թարգմանություններ են ռուսական «А ты Мишка, заткнись», «Так значит уходи, бог с тобой», «Ну и что», «Это я», «Вот оно-идет», «Ты, вот что, Островнов», «Значит я должен идти» դարձվածքների, որոնք լինելով ռուսերենի յուրահատուկ արտահայտություններ, բնորոշ են միայն նրան, և հետևաբար, թարգմանվելով, անհասկանալի են դառնում: Կարիք կա՞ ասելու, որ այս երևույթը ամենևին էլ չի կարելի դրական համարել:

Եվ վերջապես, մի դիտողություն էլ, որն ուղղակի վերաբերվում է «Արկածային գրադարանին»: Ցանկալի է հասնել նրան, որ գոնե նշանավոր հեղինակների գործերը թարգմանվեն բնագրերից, իսկ դժբախտաբար, մեզ մոտ դեռ շատ են միջնորդավորված

թարգմանությունները։ Օրինակ Մայն Ռիդի «Անգլուխ ձիավորի» անվանաթերթի վրա կարդում ենք՝ «Ռուսերեն կրճատ հրատարակությունից թարգմանեց Հ. Հարությունյանը»։ Սա նշանակում է, որ գիրքն անգլերենից նախ թարգմանվել է ռուսերեն, ապա՝ կրճատվել է, և, վերջապես, թարգմանվել է հայերեն։ Հարց է ծագում. էլ ինչ է մնացել բնագրից։ Այսպես միջնորդաբար են թարգմանված նաև Ստիվենսոնի «Գանձերի կղզին», Կուպերի «Վերջին մոհիկանը» (թարգ. Հ. Հայրապետյան) և այլն։ Մի թերություն է սա, որից, թվում է, կարելի է աստիճանաբար ազատվել, որն էլ, իր հերթին, դրականորեն կանդրադառնա մեր թարգմանական գրականության որակի վրա։

Երևան, 1963, ապրիլի 17